

դերտամ», երկու գիրք տպագրած է, զորոնք մանրամասնօրէն յառաջ կը բերեմ:

1. «Բառգիրք Հայոց, արարեալ ի Ս. Էջմիածին, Երեմիայ վարդապետէ: Եւ ես Սարգիս Եպիսկոպոս աշխատասիրեալ եւ զբառս Աստուածաշունչ գրոցն ընդ սմա միաւորեալ, որ եւ ընթերցողացն Աստուածաշունչ գրոց բաւական է լիով: Տպագրեցաւ ի Հայրապետութեանն Տեառն Նահապետի Կաթողիկոսի ամենայնից Հայոց: Ի յԱլիկոռնայ քաղաքի, եւ թվականութեանս Հայոց ՌՃԽԷ յունիս Ժ. եւ ի թվին Փրկչին 1698 Յունիսի Ժ.»,

Մեծութիւն՝ $6\frac{1}{2} \times 12.3$ սմ., էջ 1—344, 1 պատկեր:

Էջ 3—344 Բառգիրք: Էջ 344 Յիշատակարան: «Շնորհիւ եւ ողորմութեամբ Աստուծոյ: Աւարտեցաւ Բառգիրքս. թվին Հայոց ՌՃԽԷ, եւ Հոկտեմբերի ամսոյ Ի. ի լաւ եւ ընտիր օրինակէ, որ եւ յոյժ օգտակար է ընթերցողացն զԱստուածաշունչ եւ զայլ գրեանս: Աշխատասիրութեամբ Սարգըսի բանասիրի եւ դոկիացւոյ, որ եւ Սահէթնի վերաձայնեալ, եւ որդեակն իմ Սիմոնն որ յոյժ աշխատեցաւ ընդ յիս, ի Թափել զգլխագիրսն եւ ի սրբագրելն. զի ի տպարանին ոչ գոյլ. բազում գլխագիր. վոյն առաջին տետրն ի վերայ այբից խաչ եղաք զի ի տեղի գլխագրի լիցի. եւ զայն խաչով այբերն գլխագիր իմասջիք. եւ զվերոյգրեալ Սարգիս Եպիսկոպոս եւ զորդեակն իմ զՍիմոնն յիշեսջիք